


Բ



ՀՐԱԶԱՄ ԱՑԱՌՅԱՆ

ՎԻՊԱՍԱՆԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆ

Նախ քան ե գարը հայերը զրավոր զրականություն չեն ունեցել. մինչև այդ ժամանակ հայերեն լեզվով ոչ մի տող, ոչ մի տեսակ զրությամբ կամ այրութենով գրի չէ առնվաճ,¹ եղածը միայն բանավոր զրականություն էր, որ բաղկացած էր ժողովրդական երգերից, զրույցներից ու առասպելներից, որոնք երգվում ու պատմվում էին բերնե բերան ավանդաբար։ Այս շրջանը կոչվում է վիպասանական շրջան, հանուն այն երգիչների կամ վիպասանների, որոնք (հատկապես Գողթն գավառից) շրջում էին Հայաստանի այլ և այլ կողմերը և ժողովրդի մեջ երգում բանդիսի վրա այն վիպական երգերը, որ իրենք էին հնարում զյուցազների, քաջ թագավորների և նշանավոր հերոսների վրա։ Այս երգերից ամենամեծը մի զյուցազներգություն էր, որ պատմում էր հայոց Արտաշես Ա. թագավորի, Մեծն Տիգրանի, Արտավազդ Ա-ի, Արտաշես Բ-ի, ինչպես և Միհրդատի, Հրադամիզդի և Տրդատ Ա-ի պատմությունը՝ ընդդրկելով Արտաշատի հիմնարկությունից (180 ն. թ.) մինչև Ալանաց արշավանքը (72 թիվ), այն է՝ ամբողջ 252 տարվա մի շրջան։²

Չենք հիշում մնացյալ մեծ ու փոքր զանազան երգերը, որոնցով հարուստ էր այդ ժամանակի բանավոր զրականությունը։

Երբ քրիստոնեությունը մտավ Հայաստան, հոգեորականությունը հակառակ կանգնեց այդ երգերին, հեթանոսության այդ մնացորդներին։ Սակայն ժողովուրդը բնականաբար չէր լսում այդ հոգեորականներին և իր զվարթ օրերին, ինձույթների և ուրախության ժամանակ զվարճանում էր նրանցով։ Փակստուր պատմում է, թե ինչպես իշխան և ժողովուրդ արհամարհում էին

¹ Ընդարձակ տես մեր «Հայոց գրերը», էջ 106—136։

² Տես Արեգյան, Հայ ժող. առասպելները, էջ 595—6։

կրոնավորների քարոզները և սիրով ու հաճույքով լուսմ միշտ իրենց այդ հեթանոսական երգերը՝ «Զի ի վաղնջուց, յորսէ հնաէ առին նորա զանուն քրիստոնէութեանն, լոկ միայն իրըն զկրօնա իմն մարդկութեան յանձինս իւրեանց և ոչ ջերմեռանզն ինչ հաւատովք ընկալան... Խոռնապենձ բազմութիւն մարդկան ժողովը զբարացն սախարաբացն և կամ շինականութեանն, եթէ զցայդ և զցերեկ նստեալ վարդապետացն և լոստ նմանութեան ամպոցն իրոք զյորդսհեղեղ ինչ անձրեաց սաստկութիւն դվարդապետութիւնն ի վերայ հոսէին, և ոչ ոք ի նոցանէն և ոչ մի ոչ, և ոչ մի բան, և ոչ կէս բանի, և ոչ զոյզն յիշատակ ինչ, և ոչ նշմարանս ինչ՝ զոր լսէինն, և ոչ կարէին ինչ ունել ի մտի: Վասն զի միտք իւրեանց ընդ անպիտանս ընդ անօգուտա և եթէ զրօսեալ էին... ընդ չըսոտի մտացն ի հնութիւն հեթանոսութեանց սովորութեանց, բարբարոս խուժադուժ միտս ունելով: Եւ զիւրեանց երդս առասպելաց զվիպասանութեանն սիրեցեալք ի փոյթ կրթութեանցն և նմին հավատացեալք, և ի նոյն հանապազորդեալք» (Բուզ., Գ. ժդ.): Երգերի հետքերը զանում ենք դեռ ԺԱ դարում. բայց ինքնին հասկանալի է, որ ոչ ոք մինչև այդ ժամանակ չպիտի հետաքրքրվեր նրանց հավաքմամբ կամ ուսումնասիրությամբ: Հետեւաբար և այդ բոլորը մեղ համար անդարձ կորած է:

Մեր պատմահայր Խորենացին եղավ, որ առաջին անգամ ուշագրություն դարձրեց այդ երգերի վրա: Ճանկանալով գրել հայոց ամբողջական պատմությունը և օգովելով ամեն տեսակի աղբյուրներից, իրրե յուսամիտ մարդ, նա ձեռք տուավ նաև վիպասանական երգերը և վերակազմեց Նրանցից Հայոց պատմության զանազան մասերը: Սյուպիտով Խորենացին դարձավ «ամբողջ արեկելքի ամենահնագրւյն զրուցապատռւմը... Ֆիրզուսիից (մ. 1020) մի քանի զար էլ առաջ» (Ֆեթթեր, Հայկ. աշխ. Վեննա, 1895, էջ 119): Այս առթիվ նա մեջ է բերում ի միջի այլոց 12 վիպասանական հատված, 1 բկուսից մինչև 9 առդ, բոլորն էլ բառացի: Ձենք հաշվում այն վիպասանական հատվածները, որոնց նյութը կամ բովանդակությունն է միայն հիշում: Եթե չլիներ Խորենացու այդ յուսամիտ մասծությունը, մենք այսօր զազափար անգամ չէինք ունենա Գողթան երգիչների և վիպասանական արգեստի գոյության մասին:

Խորենացուց դուրս կա նաև երկու հիշատակություն. մեկը

Տրդատի մասին մի կարճ հատված է, որ ավանդում է մեղ Ագա-
թանգեղոսը, երկրորդը՝ Նավասարդի երգից մի կտոր, որ ավան-
դում է մեղ Մագիստրոսը (ԺԱ դարից):

Այստեղ հավաքում ենք վերոհիշյալ բոլոր 14 հատվածները,
այսինքն վիպասանական գրականության ամբողջ հատակոտոր-
ները:

1. 1. Երկնէր երկին, երկնէր երկիր,
2. Երկնէր և ծովն ծիրանի.
3. Երկն ի ծովուն ունէր և զկարմրիկն եղեգնիկ,
4. Ընդ եղեղան փող ծուխ ելանէր,
5. Ընդ եղեղան փող բոց ելանէր,
6. Եւ ի բոցոյն վագէր խարտեաշ պատանեկիկ,
7. Նա հուր հեր ունէր,
8. Բոց ունէր մօրուս
9. Եւ աչկունքն էին արեգակունք:
- Խոր. Ա. լա.
2. 10. Հատուած զնացեալ Վարդգէս մանուկն
11. Ի Տուհաց¹ գաւառէն, դՔասաղ գետով,
12. Եկեալ նստեալ զԵրէշ բլրով,
13. զԱրտիմէդ քաղաքաւ, զՔասաղ գետով,
14. Կոել կոփել զզուոնն Երուանդայ արքայի:
Խոր. Բ. կե.
3. 15. Թեղ ասեմ, այր քաջ Արտաշէս,
16. Որ յաղթեցեր քաջ աղգին Ալանաց,
17. Եկ հաւանեաց քանից աշազեղոյ գստերս Ալանաց,
18. Տալ զպատանիդ.
19. Զի վասն միոյ քինու ոչ է օրէն դիւցաղանց,
20. Զայլոց դիւցաղանց զարմից բառնալ զկենդանութիւն,
21. Կամ ծառայեցուցանել[ով] և ի ստրկաց կարգի պահել,
22. Եւ թշնագութիւն յավիտենական,
23. Ի մէջ երկոցունց աղդաց քաջաց հաստատել
Խոր. Բ. ծ.

¹ Տուհ գավառի անունը զարմանալի կերպով հիշատակված ենք գտնում
Դիոնիսիոս Թրակացու հայ թարգմանության մեջ, էջ 20. «Աղդական է, որ աղ-
դի է յայտական. որպես՝ զողերձական, տուհ, վրացի»:

4. 24. Եւ ուստի՞ տացէ քաջն Արտաշէս,
25. Հաղարս ի հաղարաց և բիւրս ի բիւրուց,
26. Ընդ քաջազգուոյ կոյս օրիորդիս Ալանաց:
- Խոր. Բ. ծ.
5. 27. Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեաւն գեղեցիկ,
28. Եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն,
29. Եւ անցեալ որպես զարծուի որաթե ընդ գեան,
30. Եւ ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն,
31. Ընկէց ի մէջք օրիորդին Ալանաց,
32. Եւ շատ ցաւցոյց զմէջքն փափուկ օրիորդին,
33. Արտագ հասուցանելով ի բանակն իւր:
- Խոր. Բ. ծ.
6. 34. Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի,
35. Տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինկանն:
- Խոր. Բ. ծ.
7. 36. Տենչայ Սաթինիկ տիկին տենչանս՝
37. Զարտախոյր խաւարս և զտից խաւարծի
38. Ի բարձիցն Արգաւանայ:
- Խոր. Ա. լ.
8. 39. Վիշապաղունք գողացան զմանուկն Արտաւազդ:
40. Եւ դե փոխանակ եղին:
- Խոր. Բ. կա.
9. 41. Ճաշ զործեալ Արդաւանայ ի պատիւ Արտաշիսի,
42. Խարդաւանակ լեալ նմին ի տաճարին վիշապաց:
- Խոր. Ա. լ.
10. 43. Արտաւազդայ ոչ գտեալ, քաջի որդուոյն Արտաշիսի,
44. Տեղի ապարանից՝ ի հիմանալն Արտաշատու,
45. Նա անց գնաց և շինեաց ի մէջ Մարաց զՄարա-
- կերտու-
- Խոր. Ա. լ.
11. 46. Մինչ դու գնացեր:
47. Եւ զերկիրս ամենայն ընդ քեզ տարար,
48. Ես աւերակացս որպէս թաղաւորեն:
- Խոր. Բ. կա.

12. 49. Դու յորս հեծցիս յազատն ի վեր ի Մասիս,
 50. Զքեղ կալցին քաջը,
 51. Տարցին յազատն ի վեր ի Մասիս,
 52. Անդ կացցես և զլոյս մի տեսցես:
 Խոր. Բ. կա.
13. 53. Ո՞ տայր ինձ զծուիս ծխանի
 54. Եւ դառաւօտն նաւասարդի,
 55. Զվագելն եղանց և զվագելն եղջերուաց.
 56. Մեք փող հարուաք և թմրկի հարկանէաք:
 Մագ. ԼԳ.

14. 57. Իրբէ զսէզն Տրդատ, որ սիգալով
 58. Աւերեաց զթումբս զետոց և ցամաքեցոյց,
 59. Իսկ ի սիգալն իւրում՝ զյորձանս ծովուց:
 Ագաթ. § 123

Այդ երգերի նյութի մասին ավելորդ չենք համարում տաշ
մի քանի պարզ բացատրություններ:

1. Վահագնի երգն է, որ ներկայացնում է այս աստվածա-
ցյալ գյուղազնի ծնունդը՝ այլաբանական պատկերով. Վահագնը
իրանական Վերջուայում է (հաղթության աստվածություն), որ
իրանաններից փոխառությամբ անցել է մեզ:

2. Վարդպեսի երգն է, որին Խորենացին համարում է Հայկա-
զանց Տիգրան Ռ. թագավորի հոր՝ Երվանդի ժամանակակից:
Թվում է, թե այդ Վարդպես պատանին սիրահարվել է Երվանդ
թագավորի քրոջ և եկել է խնդրելու նրա ձեռքը և նրա հետ
էլ ամուսնացել է:

3—13. Արտաշեսի մեծ երգից հատվածներ են.—Ալտաց
պատերազմի ժամանակ Արտաշեսը գերի է բռնում թագավորի
որդուն. նրա քույրը՝ Սաթենիկի բարձրանում է Կուրի ափին՝ մի
ժայռի վրա և խնդրում, որ իր սիրու համար արձակե եղբորը
(3). Արտաշեսը լսելով Սաթենիկի խոսքները և հավանելով նրան՝
Սմբատի միջոցով խնդրում է նրա ձեռքը Հայրը մերժում է,
որովհետև Արտաշեսը չպիտի կարողանար վճարել արքայո-
ւատեր համար պահանջված օժիալը (4). Այս մերժման վրա Ար-
տաշեսը խսկույն հեծնում է իր սկ ձին, անցնում է Կուրը և գե-
րելով օրիորդին՝ փախցնում է իր բանակը (5). Կատարվում է

հարսանիք, որի ժամանակ ոսկի ու մարգարիտ են շաղ տալիս՝ արևելյան թագավորների սովորությամբ (6): Արտաշեսի ընտանեկան կյանքը բախտավոր չի լինում, նախ Սաթենիկը անհավատարիմ է Արտաշեսին և ապորինի սեր է տածում դեպի Արգավան իշխանը (7): Որդին՝ Արտավազզը լինում է չար և ստահակ, այնքան, որ երգիչները պատմում են հետեւյալը. իրը թե սկզբում Արտավազզը լինում է մի շատ գեղեցիկ մանուկ, որին սատանաները նախանձելով գողանում են օրորոցից և փօխարեն մի դեմք ճուտ են դնում. դեռ մեծանում է և դառնում Արտավազզ (8): Արգավանը, որին սիրում էր Սաթենիկը թագուհին, ուզում է գավաճանել թագավորին և զրա համար սարբում է մի խնձույք (9): Արտավազզն ըմբոստանում է հոր դեմ և վտարանչելով՝ զնում է իր համար շինում Մարակերտ քաղաքը (10): Արտաշեսի մահվան ժամանակ, երբ շատերն իրենց սիրելի թագավորից չըաժանվելու համար ողջ-ողջ թաղվում էին նրա հետ, Արտավազզը նախանձելով՝ գանգատվեց նրա դեմ (11): Հայրը դագաղից անհեծեց նրան, որ քաջերը տանին նրան Մասիսի խավար անդունդները բանատրկին (12), որ և ըստ առասպելին իրոք կատարվեց: Որսի ժամանակ քաջերը նրան տարան անդունդը և շղթայի գարկին. հավատարիմ շները հետեւեցին նրան և սկսեցին կրծել շղթաները, որպեսզի կոտրվին և Արտավազզը դուրս գա կործանելու աշխարհը: Բայց այդ շղթաները չեն կոտրվում, որովհետև գարբինները զարկում են սալին և մաշված շղթաները նորից զորանում են: Այս վերջին մասը Խորենացին պատմում է քաղելով առասպելից, բայց բառացի չի դնում: Վերջին հատվածը ներկայացնում է Արտաշեսի կարոտ իդը հայրենի նախասարդը տեսնելու (13):

14. Տրդատի երգը տալիս է Տրդատի քաջությունը ներկայացնող ժողովրդական մի ասացված:

Զիսունք այս երգերի տաղաչափական արվեստի մասին, որովհետեւ զա բանահյուսության պատմության զործն է, և ուղղակի անցնենք լեզվին:

Արդյոք այս հատվածները հարազմտ են, այսինքն ներկայացնում են իրոք այն ժամանակի լեզուն, երբ երգվել են, թե կազմված են Խորենացու գրչով: Անշուշտ պետք չէ կասկածել, թե այս գրվածքները Խորենացու գրչից գուրս եկած լինեին,

որովհետեւ մեծ է տարբերությունը Խորենացու հետոսկեդարյան լեզվի և հիշյալ հատվածների մաքուր հայերենի միջև։ Թե այդ հատվածները Խորենացու գրչից չեն, դրա համար ավելի զորեղ ապացույց է նրանց տաղաչափական արվեստը։ Խորենացին արձակ է զրում իր պատմությունը, ուստի և տաղաչափյալ հատվածները իրենը չեն։

Բայց երբ ասում ենք, թե այդ հատվածների լեզուն հարադարձ է, պետք չէ առնել բառը իր ընդարձակ իմաստով։ Հատվածների լեզուն ճշտիլ նույն է Ե գարի հայերենի հետ. բայց Ե գարի հայերենը չէր կարող ճշտիվ նույն լինել ն. թ. 180 թվի այսինքն 5—6 դար առաջվա հայերենի հետ։ Արդ՝ վիպառանական երգերի հնագույն կտորները անշուշտ այդ ժամանակից են և հետեւարար պետք չէ որ նույն լինեին Ե գարի հայերենի հետ։ Այս անելից դուրս գալու համար մենք պետք է ընդունենք ուրիմն հետեւյալը։—Վիպառանական երգերը հորինված էին իրենց ժամանակի հայերենով։ բայց ըստ որում ապրում էին նրանք ժողովրդի մեջ, ուստի զարուց զար հետզհետեւ հնթարկվեցին այն ձևափոխությանց, որոնք մտել էին հայերեն լեզվի մեջ։ Օրինակի համար, եթե Վահագնի երգի մեջ եւուր ենք բառերը այն հնագույն ժամանակ ուց բերձեն ունեին, հետզհետեւ անցան այն բուլոր ձեւերից, որ կրեց թ բաղաձայնը՝ վերջապես հասնելու համար ի ձերին ձերշա այնպես, ինչպես նույն երգի հաջորդ տողի մեջ մենք այսօր կարդում ենք մօրուս, առանց նույնիսկ լավ իմանալու, թե հին ձեզ մարո՞ւս էր թե մուրօւս, բայց հաստատ իմանալով հանդերձ, թե անշուշտ մօրուս չեր Վերջապես կարելի է նույնիսկ որ Խորենացու և Մագիստրոսի ժամանակ այս երգերը ճշտիվ այնպես չէնչպիերն, ինչպես գրված են, այլ մի քիչ տարբեր արտասանությամբ, և Խորենացին ու Մագիստրոսը վերածած լինեն իրենց իմացած զրական հայերենի արտասանության։ Այսպես մենք էլ երբ լսում ենք ժողովրդի բերանից՝

Առաւոտուն կէլլէս, էրեստ վըլա,

ամենայն հանգստությամբ թզթի վրա արձանագրում ենք՝

Առաւոտուն կելնես, երեստ լուաւ¹

Մի քանի տեղ հայտնապես երեսում են Խորենացու սրբա-

Մ. Զերար, Ազգային դաստիարակություն, Կ. Պոլիս, 1876, էջ 98։

գրությունները, որինակ՝ Արտաշեսի երգի վերջում ի մեջ փխի ի մէջս, զիմչք փխ. զիմէս և հասուցաննելով փխ. հասուցեալ հետին ձեռափոխություններ են. Սաթենիկի երգի մի ժամը (տող 19—21) ամբողջովին Խորենացուց է անշուշտ:

Այս վերապահությամբ ընդունելով ուրեմն երգերի հարազատությունը, անցնենք նրանց քննության:

Ամբողջ հատակոտոքների 59 տողերի մեջ մենք զտնում ենք ընդամենը 183 բառ, որոնց այրութենական ցանկը հետհվալն է.

- | | |
|--|---|
| × ազատ 49, 51
× ազգ 16, 23
ազն տես դիւցազն,
վիշտազն,
Ալանի 16, 17, 26, 31
+ ամենայն 47
+ այլ 20
+ այր 15
+ անդ 52
անցանիլ 29, 45
աչագեղ 17
+ աչկոնին 9
× ապարան 44
առաւօտ 54
+ ասել 15
× արագ 33
Արգաւան 38, 41
+ արեգակն 9
արի 27
+ արծովի 29
արտախոյր 37
Արտաշատ 44
Արտաշես 15, 24
+ բան 17
բանակ 33
+ բանալ 20 | × բարձր 38
× բիւր 25
+ բլուր 12
+ բոց 5, 6, 8
× զաւան 11
+ զեղեցիկ 27
+ զետ 11, 13, 29, 58
× զես տես Վարդպես
զնալ 10, 45, 46
զողանալ 39
զործել 41
+ զտանիկ 43
× դիւ 40
դիւցազն 19, 20
+ դնել 40
+ դու 46, 49, ֆեղ 15
47, զֆեղ 50
+ դուռն 14
+ դուստր 17
27, 34, 41, 43
Արտաւազդ 39, 43
Արտիմեղ 13
արխայ 14, 27
× աւերակ 48
աւերել 58
ևս 48, ինձ 53 |
|--|---|

- | | |
|-------------------------|-------------------|
| լրկին 1 | հանել 28 |
| լրկիր 1, 47 | + հասուցանել 33 |
| + լրկն 3 | + հաստատել 23 |
| լրկնել 1, 2, | + հատուած 10 |
| + լրկովին 23 | հարկանել 56 |
| լրուանդ 12 | + հարուլ 56 |
| + և 2, 3, 6, 9, 21, 22, | + հարսնութիւն 35 |
| 24, 25 և այլն | հաւանել 17 |
| + զարմ 20 | + հեծանել 27, 49 |
| + զի 19 | հեր 7 |
| + է, էին 9, 19 | իխնանալ 44 |
| + ընդ, 4, 5, 26, 29, 47 | + հուր 7 |
| + ընկենուլ 31 | ձգել 30 |
| ✗ քազաւորել 48 | նաշ 41 |
| քեւ տես սրաթե | մանուկ 10, 39 |
| ✗ քմբի 56 | Մասիս 49, 51 |
| քնամութիւն 22 | Մարակերտ 45 |
| + քումբ 58 | ✗ մարզարիտ 35 |
| կրրի 57 | խարտեաշ 6 |
| + իսկ 59 | խաւարծի 37 |
| իւր 33, 59 | խաւարտ 37 |
| ինել 42 | ծառայեցուցանել 21 |
| + լոյս 52 | ✗ ծիրանի 2 |
| խարդաւանակ 42 | ծխան 53 |
| + հլանել 4, 5 | ծով 2, 3, 59 |
| + ևլ 12, 17 | ✗ ծուխ 4, 53 |
| հղեղնիկ 3 | + կալցին 50 |
| կղեղն 4, 5 | ✗ կամ 21 |
| + եղն 55 | կացցես 52 |
| եղջերու 55 | կարգ 21 |
| + կենդանութիւն 20 | ✗ կարմրիկ 3 |
| ✗ կերտ տես Մարակերտ | + նոյն 42 |
| կոյս 26 | + նստիլ 12 |
| կոփել 14 | շատ 32 |
| կուլ 14 | շէկ, տես շիկավուկ |
| ✗ հազար 25 | շիկավուկ 28, 30 |

- × շինել 45
 Շրկչ 12
 + ո 53
 + ոչ 19, 43
 ոսկէօղ 28, 30
 ոսկի 34
 + որ 16, 57
 + որդի 43
 որդէս 29, 48
 + որս 49
 + ունել 3, 7, 8
 ուստի 24
 × պահել 21
 Մարք 45
 + մեթ 56
 + մէջ 23, 45, մէջք 31, 32
 + մի' 52
 + մի 19
 + մինչ 46
 + մօրթվ 8
 + յաղըել 16
 × յաւիտենական 22
 յորձանի 59
 + նա 7, 45
 × նաւասարդ 54
 վարդգեռ 10
 + վեր, ի վեր 49, 51
 վիշապ 42
 վիշապազն 39
 + տալ 18, 24, 53
 × տաճար 42
 տանել 47, 51
 × տեղ 34
 տեղալ 34, 35
 × տեղի 44
 տենչալ 36
 × տենչանք 36
 + տեսանել 52
 + տիկին 36
 տից 37
 Տուհաց գր 11
 Տրդաս 57
 × ցամաթեցուցանել 58
 պատանեկիկ 6
 պատանի 18
 × պատիւ 41
 պարան 28, 30
 × պէս տես որպէս
 Սարինիկ 35, 36
 × սեաւ 27
 + սկզ 57
 սիզալ 57, 59
 + սուր տես սրաթէ
 սուրուկ 21
 վազել 55
 վազել 6, 55
 × վասն 19
 × վարդ տես վարդգէս
 ցաւեցուցանել 32
 վափուկ 32
 վեսայուրին 34
 × վոխանակ 40
 վոկ. տես շիկափոկ
 վող 4, 5, 56
 × բաղաք 13
 բաջ 15, 16, 23, 24,
 43, բաջ 50
 բաջապէի 23
 բասար 11, 13
 × բեն 19
 + օդ տես ոսկէօղ
 × օրէն 19
 օրիորդ 26, 31, 32

Այս 183 բառերից 16 հատը հատուել անուն է, 167 հասարակ անուն, Հատուկ անուններից երկուսը (Ալանք և Մարք) հայկական չեն:

Եթե բոլոր բառերը վերածենք իրենց արմատական ձևերին (օրինակ՝ Վարդգէս հաշվել երկու բառ, որովհետեւ կազմված է փարդ և գեղ բառերից, ընդհակառակը եղեգնիկ, պատաճելիկ, տեղալ չհաշվել, որովհետեւ արդեն ունինք եղեգն, պատաճելի, տեղ արմատականները), այն ժամանակ կունհնանք ընդամենը 162 արմատական բառ (միասին առնելով նաև բնիկ հայերենի ի, գ նախդիրները), որոնք ցուցակում շնորհատառ են և ըստ ծագման բաժանվում են հետեւյալ ձևով.

Բնիկ հայերեն բառեր 73 (45 տոկոս)

պարսկերենից փոխառյալ 30 (18 տոկոս)

անծանոթ ծագումով 51 (31 տոկոս)

խալդի-վրացական (ծուխ, ծիրան, տեղ, գաւառ) և (2 տոկոս)

ասուրական (քաղաք, փոխ) 2 (1 տոկոս)

ասորական (ցածաք) 1

հունական (մարգարիտ) 1

Հատուկ անունները հաշվի մեջ չենք առնում:

Այս տախտակից հետևում է, որ վիպասանական հայերեն լեզվի մեջ անծանոթ և հնդկիվրապական բառերը կազմում են մեծապույն տոկոսը. պարսկերեն փոխառությունները թեև հետազային գերազանցելու էին բնիկ հայերեն բառերից (960 ընդդեմ 713-ի), բայց այդ շրջանին բուն հայկական բառերից գեռ պատկաս էին. իսկ ասօրական փոխառությունները դեռ այնքան քիչ էին, որ համեմատությամբ բնիկ, պարսիկ ու խալդյան բառերի՝ տոկոս էլ չէին կազմում: Զարդանալի է, որ այդ հնագույն ժամանակից ունինք նաև մի հունական փոխառյալ բառ (մարգարիտ), որ լիզվի պատմության հետ համաձայնեցնելու համար՝ պետք է համարել ավելի հոուեական փոխառություն, քանի որ լատինական margarit, margaritum ձևերը գեռ կիկերոնի և Տակիտոսի ժամանակից գործածական են:

